

մեջ և կշրջագայի ամեն կողմերը ավերակ ծննդավայրին:

Տիգրան որ քանի մը ամիս առաջ եղած է հայրենիքին մեջ, այժմ ընտանիքովը փոխադրված է Շեորա հայաբնակ գյուղուր. պատահամբ հանդիպեցավ ինծի և իմանալով զելթունցի ըլլալս, արտավալից ալեքերով բոլոր տեսածները պատմեց և ես հայրենիքին կարուր առնելու համար ժամերով մտիկ ըրի զինքը:

Տիգրանի պատմածին համաձայն, ներկայիս Զեյթունի մեջ կրնակին քսանհինգ տոռն թուրքեր:

Այժմու բնիկները հայրենիքին արևելյան և արևմտյան բարձունքներուն վրա շինած են աղյուսե խեղճով հյուղակներ, մշակած են միայն ափաշափ տեղեր, իսկ մնացած մասերը ձգած են իրենց վիճակին մեջ:

Հայրենիքին խնամյալ, համբավալոր այդիները, պտղատու պարտեզներու բոլոր ծառերը չորսած են, դաշտերը ծածկված են փոշերով և տատակներով և հոն բույն դրած են թունավոր օձեր ու վայրի կենդանիներ:

Զեյթունի Ս. Աստվածածնա Սայր եկեղեցին, որը կտոնվեր քաղաքին մեջտեղը, ավերակուստի մը վերածված է, մնացած է մեկ սենյակ միայն և կառավարությունը այդ սենյակը վերածած է պահակատունի:

Քաղաքին արդիական բաղնիքը, որ 1904-ին շինվեցավ Սահակ Բ կաթողիկոսի տրամադրության տակ գտնված ենրյան կըտակադրամով, կանգուն վիճակի մեջ է, բայց անգործածելի, զուրի խողովակներու փշանալուն պատճառարվէ:

Տիգրան բարձրանալով բլուրը, հանգչած է մեծ թութի ծառին տակ ու երկյուղածությամբ համբուրած է այդ ծառին քովը դանվող ընդարձակ գերեզմանատան խաչ քարերը, ուրտեղ հանգիչին հայրենիքին հերոսները. այդ խաղաղ հանգստարանն ևս վերածված է վայրի թուփերու անտառի մը, շիրմաքարերը անտեսանելի ըլլալու աստի-

նանին հասած, և պիղծ ձեռքեր կատարած են իրենց պղծությունը մուրճի հարվածներով փշերով տապանաքարերը:

Ս. Աստվածածնա պատմական վանքը ավերակի վերածված է, ցամքած են անոր աղբյուրները, մարդ մարդասանքը չկա, և կտեսնե միայն վանքին մեծ կալին առջեր հասակ նետած ընկուպենի վիթխարի ծառը ճղակը ըստը վիճակի մեջ, իբր պահակ մը սպավոր:

Վանքին անդին, Տիգրան կերթա Փաթինց սառնորակ աղբյուրը, սոսյաց պղտիկ անտառակը: Այդ ձյունասպիտակ ծառերու հովանիին տակ, որ այն երանելի օրերուն հովանիիրը իրենց սրնակի անուշ և մելանուշ ձայնով գառներն ու ուղիկները ակնաղրյուրին քովիկը կառաչնորդեին և հայրենիքին պարմանունիները կախօրաններու վրա նըստած Զեյթունի փառքը կերպիկն, ամայացած են:

Տիգրան գլխիկոր և սպավոր զափիվարին վար իշնելով կասանի հայրենիքին շորու ճամրակին վրա իբր պահակ կանգուն մնացած և թոներով ծանրություն ունեցող քարերուն քովիկը և կտեսնե, որ անոնց վրա ամրացված երկաթե մեծ խաչերը չարդ ու փշուր ըրած են անհավատները ու անոնց հետքն անգամ մնացած չէ:

Տիգրան կայցելի նաև նահատակաց աղբյուրը, համբավակոր նուգրի կամուրջը, Ակ-աղբյուրը, և իբր ուրվական քանի մը օր ևս կմնա ավերակ հայրենիքին մեջ ու անկից կանցնի Մարաշ: Այս քաղաքին մեջ ևս ոչ մեկ հայու ծայն կլսե, և տրտում, տրիուր կենուանա:

Ներկայիս հայրենիքին՝ Զեյթունի մեջ լուսած են զանգակներու, միայն առավոտյան դեմ կլսվի մուեզինին ձայնը խեղճ ու կրակ մզկիթի մը աշտարակին ծայրեն, և անոր ձայնը կերթա կիսանմասի ավերակ հայրենիքին մեջ բույն դրած բուերու վուշ-վուներուն: Այսքան...:

## ԱՐՏԱՎԱԶԴԴ ԱՐՔԵԹԻՍԿՈՐՈՍ ՍՅՈՒՐՄԵՅԱՆԻ ԱՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԸ ՁԵՌԱԳՐԱՑ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Սայր Արքուում ստացվել է նվորապայի թեմի Հայրապետական Պատվիրակ Արտավազդդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանի մի կարևոր աշխատությունը — «Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց երուաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքին, Ա հատոր: Երուաղեմի հայերէն ձեռագրերի Սայր ցուցակի հրատարակման անհրաժեշտությունը վաղուց եր զգացվում և պետք է ողջունել Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանի նախաձեռնությունն ու

այս հատորի հրապարակ գալը: Ցուցակը կազմված է իննամքով և հետաքրքիր ձևով: Ա հատորուած ընդգրկված է 164 ձեռագիր, որոնց նկարագրությունները զբաղեցնում են 361 մեծադիր էջեր, երկուական սյունակից բաղկացած: Ակզեռում տրված է ամեն մի ձեռագրի խորագիրը, ապա նրա տակ, ձախ սյունակի վերկը ցուց է տրված ձեռագրի ինչ համարի տակ գրանցված լինելը կամ թիվը, իսկ վերջինիս դեմքը, աշ սյունակի

վերև՝ ձեռագրի որ թվականին գրված լինելու: Միան թիվ 1 ձեռագրին, «Ճառընտիր», գրված 1419-ին Երասաղիմոս, հեղինակը նվիրել է 48 էջ: Ցույց տալու համար թիվ ինչքան մանրամասն է կազմված ցուցակը, բերում ենք մի օրինակ:— 1338-ին գրված «Մեկնութիւն» Կաթողիկեաց թիվ 2 ձեռագրի նկարագրությունը:—

ԹԵՐԹԹՅ 426 (=852 էջ).— ՄԵՍՈՒԹԻՒՆ՝ 43×30×17 սնդմ.— ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկսին, իրաբանակը 38×10 սնդմ.— ՏՈՂԹ 37.— ՆԻՒԹ 1ակ լոկուս բարբակեալ հաստ թուղթ:— ԿԱԶՄ շագանակագոյն կաշեպատ հաստ տախտակեալ:— ՄԱԴԱՎԱՐԾ ՊԱՇՊԱՆԱԿՐ չկան:— ՀԱՆԳԱՄԱՆՔ հակոռակ հնութեանց շատ լւս պահպանուած է, կան մաս մը վնասուած թերթը, որոնք կարկուուած են: Գլխաւոր յիշատակարանը գրուած է մագաղաթեայ շորո թերթի վրայ:— ԳԱԾԱՐԿ ԹՈՒՂԹԹՅ Երկու մագաղաթեայ թերթ սկիզբը, առաջինը բոլորովին դատարկ: Խոկ երկորոդին կանակը գծուած է Սարգիս վարդապետի մեծագիր նկարը: Գիշը ու թանձ մելանով մեծկակ բոլորգիր: ԶԱՐԴԱՐԴԻՌ մասամբ թանագիր իրաբանիկը գլուխ սկիզբը, մեծագիր, տեղ տեղ մինչև 30 սնդմ: Երկարութեամբ, հին երկարագիրուն նմանութեամբ և յաջողորէն ծածկուած կապոյտով, կարմիրով և կանաչով:— ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԻՌ բոլոր զարդագիրներու հետ, մեծադիր և գոնաւոր, առաջիններու ոճով և ծաղկումով: Սկիզբի մեծ խորանին կից լուսանցաղութը 42 սնդմ երկար, շատ հին գաղափարի մը առնուած ըլլալ կը թուփ: Հո՞ս կ'երկան խիտ ծաղկեփոնչը մը մէջ ծուարած կատ թառած կենդանիներ ու թոշուններ:— ԽՈՐԱՆ հատ մը միամաս, սկիզբը, մեծադիր, հնատիպ գաղափարի մը վերցուած, շատ մութ ծաղկումով զանազան չփի զարդականիներու:— ՆԿԱՐԻ մէկէ աւելի Առաջինը, ինչպէս ըսինք, սկիզբը է, մագաղաթի վրայ, մեծադիր 43×25 սնդմ. մեծութեամբ, որ կը ներկայացնէ Սարգիս վրդ Շնորհալի, գեղին յատակի վրայ, ոտքի կանգնած դիրքով և ու մօրուով ու յազերով գլուխին շուրջը նիմուու: Վարդապետը հագած է պատարագի լման զգեստ, առանց թագի, բոլորինին յունական տարազով: Ոմի հողաթափ, կարմիրով թեթօրէն ծաղկուած ներմակ շապիկ, ու գրեթէ նոյնքան երկար ծոպաւոր երկնիդի փորուրար, վրան գոնաւոր մեծկակ քարերով: Նեղուը մութ կանաչով պատած և ճոխ ծաղերով յունական կարմիր շուրջառ, վրան կարմիր խաչանիք սպիտակ նմիկերուն: Զախ ձեռքով կը կրէ կազմուած ու զոյց կապիչով սկզբուած կանաչապատ աւետարան մը. աջով օրնութիւն կու տայ: Շնորհալին աչ կողմը, ցածկեկ նստարանի մը վրայ քովէ քով նստած են, մանկարաններու տղոց գիրքով, 6—8-ամեայ երկու մանուկներ, Մելքիսեդեկ և Մելքիսաւէ, որոնք վարդապետին ձախ կողմը նմանապէս ցած նստարանի վրա նստող երրորդ մանկան՝ Երմանէի հետ կը ներկայան ձեռագրին ստացող Վարդան խանայի և իր ձունար երեցնող երեք զաւակները: Մեծը՝ Մելքիսեդեկ հագած

է ներկնագոյն թօն, մէշքը նեղ դօտիսվ մը սեղմուած, որ չի տեսնուիր սակայն Գրւախը ծածկած է միագոյն կարմիր գգակով: Ձեռքերը իրարու կցած, բարեպաշտական գիրք մը ունի, լուրջ և վայելու գէմքով: Երկրորդը, Մելքիսաւէ, հագած է առաջին եղորը պէս ճոխ ծալքերով կարմիր թօն: ոմի աւելի լայն կանաչ գգակը: Երկու ձեռքերը հեռացուցած է իրարմէ ու շնորհ կ'աղալ սուրբէն, նոյնքան շնորհալի ու յաջող գէմքով: Ոմի եօթը տարից: Փոքրիկը՝ Երմանէի, վարդագոյն մանկական շապիկ է հագած, գուլուը կապտագոյն գգակով ու շնորհալի գիրքով մը նստած: Զախ ձեռքով ընծայ մը, հաւանաբար ծաղիկ, կ'երկարէ սուրբին Երեք մանուկներն ալ հագած են ու մորթէ կարուած մուճակները: ԺԴ գարու մանկական տարազի սրան կ'աղի վեր, կ'երևայ ջիւու, նստած ճոխ գահի վրայ, կարմրամոյն և կանաչ հանդերձով և խաչանիշ նիմուունվ: Աշ ձեռքով օրնութիւն կը բաշխէ, խոկ ձախին մէջ բռնած է շգրուած քառակուափ թերթ մը մագաղաթի նկարին աչ կողմը գմբեթավոր և աղիւաշէն տաճարի մը սիւնազարդ մէկ կամարին տակ կ'երևայ Յակոբոս Առաքեալ, կարմիր շապիկով, մութ կանաչ յունական շուրջասով և սեղվ խաչանիշ ճերմակ նեղ նմինութիւնով: Նկարին ամէնէն յաջող և աշքառու մասը ձեռագրին ստացող Վարդան Երէցի մանրանկարն է, 18 սնդմ մեծութեամբ, ոտքի կանգնած գիրքով: Երէցը հագած է մութ կանաչ և ճոխ ծաղերով լայն վերարկու, իսկ վրան կը կրէ մանուչակի կարմիր՝ ետևէն երկար, առջևի մասը կարման փիլոն, վիզին շուրջը շնորհալիութէն ամփոփուած: Մօրուքը կարմ, բայց այսէրուն վրայ լայնած, աւելի քան քառասնամեայ, թեթէ ճերմակներով: Գլուխը ծածկած է կ: Պղուոյ սուլթաններուն ժիշտած գործածած ճերմակ ապարօշներով: Զախ ձեռքը գէմքի գուրս բացած է, փսկ աջով կը կրէ զարդարուն խաչ մը: Երրորդ նկարը, էջ 258, նկարուն կիսախորանի մը քով: Կը ներկայացնէ Պետրոս Առաքեալ, կանաչ թօկայվ՝ որ շատ չերեմիր և կարմիր հաստ փիլոնով, մազերն ու մօրուքը բոլորովին մեծկած և մերկ ոտքերով: Աշ ձեռքով կ'օրնէ, ձախը բոլորովին մերկ է: Չորրորդ նկարն է, էջ 633, Յովնաննու Առաքելոյն նստած գիրքի վրայ պատկերը, մերկ ոտքերը հանգիւցուցած կարմիր մուրացի վրայ ու ձեռքերուն մէջ բռնած ճերմակ թուլք մը: Հագած է կարմիրով և մութ կանաչուն գգեստ:

ԳՐԻՉ՝ Գրիգոր քահանայ:— ՄԱՂԿՈՂ Առաքել սարկապ:— ԱՍԱՅՈՂ՝ Վարդան քահանայ:— ՎԵՐԴԻՆ ԱՍԱՅՈՂ՝ Սողոմոն:— ԺԱՄԱՆԱԿ՝ ԶՀՀ (=1338).— ՏԵՂԻ անծանօթ: Միու:

Զեռագրի նկարագրությունից հետո հեղինակն անցնուած է նրա բովանդակովթյանը, ցուց տալով որ էջից որը ինչն յուլթ է պարունակում: Քաղմազանության և իր հանուաքրքր-

բովյան համար որպես օրինակ բերում ենք  
թիվ 89, 1273-ին գրված «Թէոփիլոսի ներ-  
բռղեան» ձեռագրի բովանդակության շարա-  
դումը. —

Մատեանս է՝ Թէոփիլոսի ներբռղեան՝ թրղ-  
թեայ, մեծադիր և բովանդակութեամբ ար-  
ժիքաւոր և լիշտակարաններով ճոխ, որ կը  
պարունակէ

ա. — էջ 1—166 Երանելոյն Թէոփիլոսի ա-  
սացեալ ներբռղեան պատմագրաբար, սուրբ  
Հաւուն մերոյ և Լուսաւորչի քահանայապե-  
տին Քրիստոսի և Վկայի մեծին Գրիգորի  
արքեպիսկոպոսի Հայոց Մեծաց աշխար-  
հի. — Ի լուսոյն անմատոյց ճառագայթից  
պայծառացեալ շառաւեղաւք, արեգակն լու-  
սազարդ, որ ի խաւարաբորբոք արջմաթոյը  
նսեմախափ ազգաց Հայաստանեաց մինչ ա-  
ռանց լուսոյն հաւատոց շրջէին, զի և նոքա  
լինէին խաւարեալք կուսազտութեանն մո-  
լիքնութեամբ: ...

Բայց այստեղ ավելի հետաքրքիր են հե-  
տագա տողերը. —

«Սա ծափցաւ լուսապայծառ արեգակն ի  
կողմանս արմելից, առաջին քահանայապետ  
և խորտակաւող բազմացն, և հաստատաւող  
Հիման սուրբ եկեղեցեաց. Առաջին դիմա-  
մարտին, առաջին զինաւոր՝ յաղթոլ: Առա-  
ջին պսակաւոր, փշակասգեստ արքային:  
ի գիշերաբորբիցն, լոյս շառաւիշագագորդ: Ի  
խաւարելոցն, լուսապայծառ՝ արեգակն: Եւ  
ի ծագմանէ արեգականն արդարութեան,  
ա'ստղն շառաւիշագագարդ անծածկելի: Առա-  
ստարեր արուսեակն: Լուսաբեր առա-  
ա'սոն: արեգակնապայծառ տի'մ: ի տուէ  
լուսին պայծառացեալ: պայծառութեան ճա-  
ռագայթին: մաքրութեան աղքե'րն: սրբու-  
թեան վտա'կն: պարարտագոյն անդաս-  
տա'նն: արդիմաքրով անա'գն: փշակիզող  
բո'ցն: սերմանողասէր մաճկա'լն: որմնա-  
խըլող երկրագո'թն: երկնամովս մանկաղն:  
պարարտ հասկիցն հընձաւոն: աւրանաժողով  
կա'լն: հեծանոցաբարձ յըստակաւոն: պա-  
րարտ արդեանց ժողովո'ղն: անպտուղ յար-  
դին կիզո'ղն: եւ երկնային ըշտեմարանացն  
լցա'լոն: մարմնաւոր տաճարն, և անմարմ-  
նոյն բնակարան: աստուածաշշէն տոմնն, և  
երրորդութեան աւելան'ն: հաւը հաճելի հայ-  
րապե'տն, որդոյ քարոզելոյ նըփրա'կն: հո-  
գիակիր վարդապե'տն: աստուածուայց ու-  
սուցի'չն: աշակերտասէր վարժո'ղն: վար-  
դապետասէր աշակե'րոն: քանքարասէր  
վստահացեա'լն: աճեցուցանող ժառա'յն: ի  
սակաւուն հաւատարի'մն: ի վերայ բազ-  
մաց կացա'լոն: եւ ուրախութեան տեառն  
ժառանդաւոն: ...»

Գրիգորիոս: Հաստատուն սի'մն:

Գրիգորիոս, եկեղեցեաց հի'մն: անսա-  
սանելի խարի'սխն: անշարժելի հի'մն: ան-  
թենդալի պարի'սպն: անխախտելի աշտա-  
րա'կն: անբեկանելի վէ'մն:.... և ալլն:

Այնպիս երկար շարունակվում է, մենք  
բովանդանանում ենք այսքանով: Այնուհետև  
հեղինակը շարունակում է. —

բ. — էջ 167ա - Թուոք Ընթանրական ներ-  
սիսի Կարողիկոսի Հայոց, առ համարէն  
Հայոց սեռ ազինս որոց տեսչութիւնն հաւա-  
տացաւ նմա ի Տիառնէ. — Ներաչս ծառայ  
Քրիստոսի և ողորմութեամբ նորին կաթողի-  
կոս Հայոց...:

Բովանդակության շարագրումից հետո  
հեղինակը տալիս է «Յիշտակագրու-  
թիւնք»-ը՝ այսպես. —

Ա. — էջ 165թ՝ ի վերջ Թէոփիլոսի ներբո-  
ղեանին. — «Թարգմաննեցաւ լուսազարդ և  
վայելլաշար ճառս այս ի յոնականէն ի  
մերս. հրամանաւ երիցս երանեալ Հայրա-  
պետին տեառն Գրիգորիոսի Հայոց Մեծաց  
Կարողիկոսի. ի ձեռն իմաստուն և հանձարեղ  
թարգմաննշն Թէոփիլոսէի, զոր և մինչն  
ցայժմ ճառագ այս թաքուցեալ էր ընդ մահ-  
ճաւք և ծածկեալ էր ընդ գորուանաւ: իսկ ի  
հրա(մա)նէն Աստուծոյ յայտնեցաւ սա ի  
սուրբ վանս Ալբայշկաղնիս. իսկ իմոյ ա-  
նարժանիս յոգնամեղ և անպիտան կրաւեա-  
մարիս Պաղոսի ըղձալի փափագանաւք  
գրեալ եղի զսա ի հոյակապ մայրաքաղա-  
քացեալ սուրբ անապատս Ալբայշկաղնիս....»  
և այսպիս շարունակ:

Հիշտակագրությունների մեջ կան նաև  
ուստանավոր հիշտակագրություններ, այս-  
պիս օրինավ՝ թիվ 88, Քրարողք ողջումիս ձե-  
ռագիրը, գրված 1774-ին, ունի 24 տնից  
բաղկացած հիշտակագրություն, որից բե-  
րում ենք 3-րդ, 4-րդ և 5-րդ տները.

Ի ճգնարանն հօրն Անտոնի,  
Յանապատն իսկ մենարանի,  
Խոլմքեալ դասիմ եղբարց կարգի,  
Վիպեմ ըզփառա էջմիածնի:

Էջմիածնի անուն կարդամ,  
Սալմոս Նարեկ լեալ միշտ բանամ,  
յԱստուած գոշեմ յաթուն յուսամ,  
Ողորմութեան արժանանալ:

Ջայս երգարանս յօրինեցի,  
Յանուն փառաց էջմիածնի,  
Տարփանք հոսեմ յամպոյ սըրտի,  
Բոցով շընչոյս ցանք ճենճերի:

Ավելի հետաքրքիր է թիվ 2497, 1672-ին  
գրված, «Տոնացոյց» ձեռագորի հիշտակա-

գրության խրատական բնույթի ունեցող ստանավորը՝ 13 տնից բաղկացած, որից բերում ենք առաջին 9 տոմսը.

1. «Արդ պատուիրեմ կարդայ և տես,  
Զքեզ խրատեմ թէ միշտ դնես,  
Եւ զավատուիրն նորա առնես,  
Սըրտի մտաւք զԱստուած սիրես:
2. ԶՏանացոյց լաւ պահես,  
Եւ զամենայն տամ տեսանես,  
Զժամատեղն ժիր պահես,  
Զօրըն սըրբոց տօնիւ պատուես:
3. Ընահակն յիշատակես,  
Սաղմուսելով միշտ յաղաւթես,  
Շարականաւ աւրհնաբանես,  
Բզվարք նոցա դու միշտ պատմես:
4. Գանձեր տաղեր անոյշ ասես,  
Եւ զժողովուրդն ուրախ առնես,  
Ալէլուի զօրս մեծարես,  
Թափաւորի զուարձացնես:
5. «...Եւ խունկ անուշ մատուցանես,  
Ի սովոր տաճարըն մըտանես,  
Զահ լուցանես և մոմ վառես,  
Եկեղեցոյ աւել ածես:
6. Սուլութենէ ի զատ կացցես,  
Գինոյ և քնոյ չտաս զքեզ,  
Հեղ և խոնարհ զանձրդ պահես,  
Ընկերասէր եղիր և հեղ...»:
7. Քան զքեզ մեծըն մեծարես,  
Քան զքեզ մեծն անուամբ շայնես,  
Քան զքեզ փոքրն խրատես,  
Հայր և եղբայր և տէր ասես:
8. Եթէ զխրատս իմ դու լսես,  
Յաշ ըռամկաց սուրբ երկիս,  
Զհարկիքը քո յաւելցնես,  
Զհրամանք Տհառըն կատարես:
9. Այս բաւական է թէ լըսես,  
Եւ Աստուծոյ միշտ ծառայես,  
Եւ անխափան միշտ կատարես,  
Զսուրբ Աստուծոյ ուրախ առնես:

Այս հատորում ընդուրկված են Երուաաղեմի ձեռագրատան 1—140 համարների տակ գրանցված ձեռագրերը հաջորդաբար և բացի դրանցից նաև 24 ձեռագիր՝ գրանցված հետևյալ համարների տակ 271, 306, 318, 365, 373, 417, 453, 1620, 1240, 1535, 1603, 1924, 1930, 1946, 1955, 2151, 2311, 2497, 2625, 2629, 2649, 2650, 2651, 3026:

Այս մասին հեղինակը հառաջաբանում դրում է.—

«Ինչպէս որ պիտի տեսնեն ընթերցողներս, Յուցակս սկսած եմ կանոնաւորաբար պահելով 1—140 թիւզ: Յաջորդ թիւերը իմ աշխատութիւններուա համար 1941-ը կանխող այցելութիւններու ընթացքին պատրաստած ըլլալով, փափաքեցայ զանոնք ևս կցել անոնց, միշտ շարժած՝ օգտակար ըլլալու իդէս մեր ազգային բանասիրութեան»:

Սակայն 1—140 թիվ պարունակող ցուցակում պահստամ են 35 և 135 համարների տակ գրանցված ձեռագրերի նկարագրություններու Այս մասին գրքում ոչ մի ծանոթություն չկա, թե ինչու դուրս են մնացել այդ երկու համարի տակ գրանցված ձեռագրեր՝ «Ճաշոց—Տօնացոյց»-ը, գրված 1192 թվին սիլիկայի Մաշկոր վանքում: Իսկ ամենանորը հանդիսանում է հետևյալը: 1—140 թիվ ձեռագրերի մեջ ամենահինը հանդիսանում է № 121-ի տակ գրանցված ձեռագիր՝ «Ճաշոց—Տօնացոյց»-ը, գրված 1924 թվին սիլիկայի Մաշկոր վանքում: Իսկ ամենանորը հանդիսանում է № 62-ի տակ գրանցված ձեռագիրը, «Եւագի և Ուկեբերանի ճառեր»-ը, գրված 1849-ին Սևան անապատում: Ցուցակի 141—164 համարների տակ նշված 24 ձեռագրերից ամենահինը հանդիսանում է Երուաաղեմի ձեռագրատան № 1924-ի տակ գրանցված ձեռագիրը: Սա մի Ավետարան է, գրված 1064-ին: Իր հետքրորդիւն համար բերում ենք այս Ավետարանի նկարագրությունը, որ հետևյալ ձևով է շարադրված Ցուցակի հեղինակի կողմից:—

ԹԵՐԹԹ՝ 282 (=564 էջք).— ՄԵՍՈՒԹԻՒՆ 37×26×7 սնդմ.— ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. — Նիիթ՝ հաստ մագաղաթ, որ շատ հեռու է, իրը գրութիւն նիթ, Կիլիկիան Աւետարաններում համար գործածուած և մեծ ուշագրութեամբ և արվեստով պատուած մագաղաթներէն. շափազանց հաստ է և կոշտ, վասն զի զայն պատրաստող արհեստաւորը է կրցած իր գրութեան նիւթին տալ ո՞չ պէտք եղած նորութիւնը, և ոչ ալ սպիտակ փայլլու Ոչ նուազ աւեր գործած է նաև ժամանակը, թերթերը սկցնելով և փայտի ձև մը տալով գրեթէ բոլորին:— ՏԱՂԹ՝ 19.—

ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ հաստ փայտեայ, լանջերով և թիկունքով:— ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՀ ՆԱԿԹ՝ Երկու թերթ միայն, ձեռագրի վերջը, երկաթագիր երկսիւն Աւետարանի մը մասերով՝ «...Նոյն շինուածն, ամէն ասեմ ձեզ եթէ ո՞չ թողցի ալդր քար ի քարի վերաբար...»:— ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած, հակառակ պատկառելի հնութեան. յաջորդական կազմերն ալ օդնած են ձեռագրիս անվետը մնալուն, Եւսերի առ Կարպիանոս գրած նամակը

փոխանակ՝ հանդիպակաց գորդ էջերու վրայ գրուելու, իրարու կը յաջորդեն, յէջ 1-2։ Համաձայնութեան տախանկերը ութը հատ են, առաջին շորսը երկուն, իսկ վերջին շորսը եռասին և կիսաշրջանակ խորաններու տակ, բոլորն ալ ծաղկուած։ Զորս Ավետարանները ալ կը սկսին առանց խորանի, առանց սկզբնաւառի և առանց լուսանցագարդի, այլ ուղղակի «Գիրք Ծննդեամ Յիտուաի Քրիստոսի», նոյն միւս երեք Աւետարաններուն համար ալ կուսանցքներուն վրայ կ'երկի համարարատան համարանիշերը։ Զեռագիրս բացի համաձայնութեան տասը տախտակներէն և ասոնց յաջորդող նկարներէն, ներքին մասերուն մէջ գեղարուսական ունէ հետք չունի։ Եջ 353-4 թիրթը ինկած է ու դարձեալ գրուած մագաղաթով։ — ԴԱՍԱՐԿ ԹԵՐԹՔ չկան։ — Գիրք սև մելանով մեսրոպանական երկարագիրը։ — ԶԱՐԴԱԳԻՐԸ եւլ ԼՈՒԱՆՆԵՍԱՋԱՐԹՔ՝<sup>9</sup> կը փոխարինեն նախնական գծագրութիւններ միայն։ — ԼՈՒԱՆՆԵՐ՝ չկան, բայց սկզբի առաջին հինգ թիրթերուն վրայ կ'երևան նախնական ունով տասը խորանագարեր, համաձայնական տասը տախտակներու յատով, գաղափարուած, շատ հաւանաբար, աւելի հին օրինակներէ։ — ՆԿԱՐՔ՝ միայն հինգ հատ, յէջ 11՝ շորս աւետարանիշերուն նկարները մէկ շրջանակի մէջ, զարմանալիորէն մանկական ու նախնական գծագրութիւն մը, բայց և ամսպէս շափազնաց խստախիպ և հետաքրրական, ուր ո՞ւ գորներուն ներդաշնակութիւն կայ, ու ալ ձեռնու մէջ համաշափութիւն նկարիս տակ գրուած կը տեսնենք հետևյալ դիտողութիւնը, գրուած՝ բաւական դարեր առաջ, դատելով գրչութենէն Կարծեմ գրագիրն որ գրեց զԱմարանս, ինըն ո՞ւ համել զայս պատմերու, և այլ ստորդ երեխ որ շն սոքա շատ աղուտու։ ԺԱ-ՐԴ դարը Կիլիկեան նկարչութեան համար անցման շրջան մըն Է՝ որում պիտի յաջորդէր ծաղկեալ շրջան մը, թէջ 12՝ Հոգեգալաւտեան նկարը, աւելի մեծագիր։ Տիրամալը՝ 12 առաքեաներով, միշտ միննույն մանկական արուեստու եջ 13՝ Յիսուս խաչին վրայ, բովկերը կան վերջին ժարք հետաքրրական հռովմայիցի երկու զինուորմեր, տէքաւոր, տարօրինակ գէմքով, զգեստով և գլուարկով, Կան կոծող երկու կիները։ Հո՞ս ալ նախնական միևնուն արուեստու թէջ 14՝ դարձեալ շորս աւետարանիշերը, շատ աւելի անխնամ քան նախորդները և վերջապէս յէջ 15՝ հիառաւծ խաչ մը, պատուանդանի վրայ։

Գիրք՝ Ստեփանոսու։ — ԱՍԱՑՈՂ՝ անձանօթ, երկրորդ ստացողք՝ Յակուր, Բաներեցէս և Կիպրիանոս կրօնաւորը՝ Երուաղէմ։ — ՏԱԿՈՂ՝ անձանօթ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՇԺԳ (=1064). — ՏԵՂԻ՝ Շում (ը) հանգաւեաւ

Հետաքրքիր է այս Աւետարանի Երուալին մի ձեռագրատունն ընկնելու պատմությունը, որ բերում է Ցուցակի հեղինակը։ — ԺՄԱՏԵԱՆԱ է՝ Աւետարան, մագաղաթեայ, կազմուած և մեծագիր, որ Երուալաղէմի ձեռագիր հաւաքմանց մէջ տամի իր մատնաւոր տեղը, իրը հնարդուցած երկարագիր դրչութիւն։

Կը պատմուի, որ ձեռագիրս Հայաստանէն Կ. Պղիս ղրկուած է Տատեանց ընտանիքէն, զնահատուելու և ապա ծախուելու համար ուրիշ բազմաթիւ հնորհեայ ձեռագիրներու հետ, որոնք հաւանաբար ևս պիտի ղրկուէին Կ Պղիս։ Առաքել Սիսակ Պեյ Տատեան իմացուցած է Գէտրդ Դ Կաթողիկոսին, որ բոլորն ալ բարեբախտաբար բերել տուած է իր մօտ և աւելցուցած Մայր Աթոռոյ ձեռագիրներու հաւաքմանց վրայ։ Տատեան այս մէկը կը ղրկած են Երուալին, 1880 սեպտեմբեր 10-ին, ինչպես որ կ'երկի կողքին ներսի երեսին վրայ վակցուած յիշաւակադրութիւն է նշան, ի յիշաւակ Տատեան զարմին։

Ցավոք սրտի, Արտավազդ Արքեակիսկոպոսը շի բերում Ցուցակում տեղ դտած մյուս ձեռագրերի Երուալաղէմի ձեռագրատունն ընկնելու պատմությունը, որը ոչ նվազ հետաքրքրություն է ներկայացնուած։

Ա հատորուած ընդունված ձեռագրերը մեծ մասմբ տեսնեն կրոնա-բարոյական բովանդակություն։ բայց կան նաև այլ բովանդակությամբ ձեռագրեր, ինչպես օրինակ Թիվ 14 ձեռագրիր՝ «Պատմութիւն գիւտոյ Ամերիկայի» (Հայատառ թուրքերն լեզվով), Թիվ 29 ձեռագիրը՝ «Պատմութիւն ընդհանուր աշխարհի» (Թարգմ.), Թիվ 55 ձեռագիրը՝ «Տրամախօսութիւն» (Թարգմ.), Թիվ 83 ձեռագրիր՝ «Պատմութիւն օսմանեան վեցիրներուած, Թիվ 104 ձեռագրիր՝ «Պատմութիւն Երուալիսմի», Թիվ 119 ձեռագիրը՝ «Պատմութիւն Սեծին Պետրոսի» (Թարգմ.), Թիվ 125 ձեռագիրը՝ «Աշխարհագրութիւն» (Թարգմ.), Թիվ 139 ձեռագիրը՝ «Համախօսութիւն» (Թարգմ.), և այլն։

Ցանկալի է նաև, որ Ցուցակը լիներ պատկրագրդ։ ձեռագրերի նկարագրության հետ միաժամանակ դրված լինեին նրանցից կարւորների արտաքին տեսքի, կազմի, խորագրի, նրանցում պարունակված արժեքավոր նկարների, մանրանկաղիների լուսանկարները, ինչպես նաև էջերի արտաքին տեսքն ու գրչության տառերի ձևը պատկերող նկարներ։ Ներկա հատորին անհրաժեշտ էր կցել նաև նրանուած նկարագրված ձեռագրերի տախտակը, որը զգալիորեն կեշտացներ թի Ցուցակի օգտագործուածը և թի հնարավորթյուն կտար մի ակնարկով պատկերացուած կազմներու Ցուցակում տեղ դտած ձեռագրերի մասին։ Հեղինակը այս առթիվ գրում է, որ Շիկրութիւնն համար Ցուցակիս սկիզբը դրած եմ բովանդակութեան լման ցանկը, յաջորդական տախտակներու վրա...։ սակայն մեր ձեռքի տակ եղած օրինակում

պակսում է այդ ցանկը։ Հավանորեն այդ ցանկը տպարանում առանձին տպադրած լինելով մոռացել են կցելու մեզ ուղարկված օրինակին։

Արտավագդ Արքեպիսկոպոսի այս նախաձեռնությունը արժանի է քաջալերանքի ու խրահուսանքի և պետք է ցավի միայն, որ մեր վաստակավոր ու բազմազբաղ բանասերը դրկված է եղել այս ըստ ամենայնի օդտակար գործին ամելի շատ ժամանակ հատկացնելու հնարավորություններից, այլապես այսօր մենք կունենացինք Ա հատորին հաջորդող մյուս հատորները ևս Բազմահամատքանասերն իր այս աշխատառությունը պատրաստել է համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում, ինչպես ինքն է գրում Յուցակի հառաջարանում, «անվճառ տքնութեամբ, շուր ամսուան մէջ, 1941 մայիսէն մինչև սեպտեմբեր, յաջողեցայ քննել ու ցուցակագրել աւելի քան 150 ձեռագրեր, միայն թիւ 1 շորա հատորիցց նաշոցին տալով քան օր ժամանակ»։

«Խորհեցայ, որ եթէ այդ ամիսներուն շատ բան չէի կրնար ընել Վանքին մէշ իմ կարճատե բնակութեանս ընթացքին, կրնայի գէթ քիշ ընել ու պատրաստել այսքանը միայն ու սպասել պատեհ առիթի մը զայն հրատարակելու համար՝ իբր Ա հատոր»։

Որպախութեամբ կարդացինք հառաջարանի

այն տողերը, որ Արտավագդ Արքեպիսկոպոսը պատրաստակամություն է հայտնում շարունակելու իր մկան գործը. «Իմ ուրախութիւնս իրավէս երշանկութեան պիտի փոխակերպուի, եթե բարի օր մը կրկին անցնիմ Երուսաղէմ ու եթէ ոչ ամբողջական Մայր Յուցակը, գէթ ներկայի ծաւալով, կարենամ անոր երկրորդ Հատորն ալ լրացնել և սիրով ներկայացնել հայ բանասիրական սեղանին»։

Ի սրտե հաջողություն ենք ցանկանում բեղմնավոր գրչի տեր մեր բանասերին իր մկան այս գործում։ Սակայն նկատի առնելով Ա հատորի ծավալը և նրանում ընդուրկված ձեռագրերի թիվը, կարծում ենք, որ այդ աշխատությունը մի քանի տասնյակ հատորներ կկազմի և Արտավագդ Արքեպիսկոպոսը ի միջակի շի լինի մենակ կատարելու բոլորը, մանավանդ, որ նա զբաղված է նաև ուրիշ աշխատություններ պատրաստելով։ Հետևաբար այս կարևոր գործում նա կարիք կզգա աշակիցության, օգնության, իսկ այդպիսի աշակիցներ կարող են հանդիսանալ Երուսաղէմի Վանքի Միաբանության ձեռնհաս անդամները, որոնց հետ համատեղ հնարավոր կլինի ավարտել Երուսաղէմի ձեռագրատան մեջ պահպող ձեռագրերի Մայր Յուցակը, անգնահատելի ծառայություն մատուցելով հայ բանասիրական գիտությանը։

